



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 192844, 15 10

2014թ.

ԵՊՀ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով ԵՊՀ գիտական խորհրդում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի (2011-2016թթ.) ընթացքի քննարկման արդյունքներից, ինչպես նաև ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ կետի 5-րդ ենթակետով և ԵՊՀ գիտխորհրդի 2010 թ. նոյեմբերի 18-ի «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը հաստատելու մասին» որոշման 4-րդ կետի 4.1 և 4.4, 2011 թ. հուլիսի 7-ի «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման մասին» որոշման 1-ին կետի 1.7 ենթակետերով՝

Հ Ր Ա Մ Ա Ց Ո Ւ Մ Ե Մ

1. Պրոռեկտորներ, ծրագրի համանախագահներ Ա. Գրիգորյանին և Գ. Գևորգյանին՝ ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացումը՝ ամփոփիչ ատեստավորման համար չափանիշ ընդունելով սահմանված ավարտական պահանջների կատարումը:
2. Ֆակուլտետների ղեկաններին՝ ծրագրի ընթացքի և խնդիրների մասին վերստին իրազեկել ամբիոնների վարիչներին և ֆակուլտետային պատասխանատուներին՝ համապարտորեն հանձնառելու իրենց դասախոսական համակազմի կողմից ծրագրի կատարումը:
3. Հետբուհական լրացուցիչ կրթության վարչությանը՝
 - 3.1. ապահովել ծրագրի կրթական կառուցամասի պարտադիր ու կամընտրական դասընթացների պարբերաբար կազմակերպումը, արդյունքների ամփոփումը և ծրագրի ընթացքի մասին տեղեկատվության հասանելիությունը շահագրգիռ բոլոր կողմերին,
 - 3.2. 2015/2016 ուսումնական տարվա վերջին ներկայացնել ամփոփ հաշվետվություն ծրագրի կատարման մասին:
4. Որակավորման մանդատային հանձնաժողովին՝ 2016/2017 ուսումնական տարվանից ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների տեղակալման մրցույթի մասնակցի համար որակավորման բարձրացման չափանիշ համարել ծրագիրը կատարած լինելը՝ վկայականի առկայությամբ:

ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ